

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 5

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական խորհրդի 2018թ. դեկտեմբերի 27-ի նիստի
Գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 48-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Համալսարանում 2018 թվականին իրականացված աշխատանքների և 2019թ. բյուջեի մասին:

Զեկուցող՝ Ռուբեն Միրզախանյան

2. Գիտահետազոտական կենտրոնի հաշվետվությունը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող բազային և թեմատիկ ծրագրերի մասին:

Զեկուցող՝ Կամո Վարդանյան

3. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյանը ներկաներին առաջարկեց հաստատել նիստի օրակարգը, եթե նրանք այլ առաջարկություններ չունեն:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին օրակարգը:

Պարոն Միրզախանյանը ծննդյան հոբելյանի առթիվ շնորհավորեց համալսարանի հինգ դասախոսների և նրանց շնորհեց դրամական պարգև:

Գիտական խորհրդի նախագահը շնորհավորեց նաև համալսարանի դասախոսներ Քնարիկ Աբրահամյանին, Արմինե Բաղդասարյանին, Արմինե Միքայելյանին, Սոնա Դավթյանին, Աղվան Մխիթարյանին և Քնարիկ Ուզունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու կապակցությամբ և հաճնեց վկայագրերը:

Լսեցին – Համալսարանում 2018 թվականին իրականացված աշխատանքների և 2019թ. բյուջեի մասին:(Զեկ.՝ ռեկտոր Ռուբեն Միրզախանյան): (Կից՝ տես հաշվետվությունը):

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ներկայացրեց անցնող տարվա ընթացքում իրականացված աշխատանքները, անդրադարձավ բուհի ուսանողների թվին և դրանով պայմանավորված՝ նաև հաստատության ֆինանսական վիճակին և հաջորդ ուսումնական տարվանից ուսման վարձերը բարձրացնելու պատճառներին: Ռեկտորն առանձնակի կարևորեց առաջիկա ուսումնական տարում օտարերկրյա դիմորդների ներգրավումը և ընդգծեց, որ այդ գործում մեծ է ամբիոնների աշխատանքը՝ սկսելով ուսումնական պլանների, մասնագիտությունների առարկայական ցանկի թարգմանությունից:

«Մանկավարժական համալսարանը բուհական համակարգում լուրջ մրցակցության մեջ է. պետք է հնարավորինս շատ կիրառել ուսուցման առաջավոր ձևերը», -նշեց ռեկտոր Միրզախանյանն ու հավելեց, որ Google Classroom էլեկտրոնային հարթակը լուրջ առավելություն է օտարերկրյա դիմորդների ներգրավման համար: Պարոն Միրզախանյանը հավաստիացրեց, որ բուհը հաջորդ ուսումնական տարում ևս շարունակելու է վարել ուսանողակենտրոն քաղաքականություն, որ ուսանողները հնարավորություն ունենան շփվել, մաս կազմել աշխարհին և լինեն ավելի գրագետ: Պարոն Միրզախանյանը ներկայացրեց նաև անցնող տարվա դրամական մուտքերի և ելքերի դինամիկան, բաշխվածությունը, ընդհանուր ուսանողների և 1-ին կուրս ընդունվածների թիվը ըստ տարիների, ինչպես նաև 2019-ի դրամական ելքերի բաշխվածությունն ու 2019-ի բյուջեի նախահաշիվը:

1. Որոշեցին – Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի հաղորդումը 2018թ. համալսարանում իրականացված աշխատանքների և 2019թ. բյուջեի նախահաշիվի մասին, ընդունելի գիտություն:

Լսեցին – Գիտահետազոտական կենտրոնի հաշվետվությունը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող բազային և թեմատիկ ծրագրերի մասին: (Զեկ.՝ Կ.Վարդանյան)(Կից՝ ելույթը):

2. Որոշեցին –

- պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների կատարման

գործընթացը համալսարանում գնահատել բավարար,

- բարձրացնել գիտական գործունեության արդյունավետությունը՝ շարունակելով մասնակցել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված բազային և թեմատիկ ֆինանսավորվող ծրագրերի մրցույթներին,
- խրախուսել միջազգային գիտական կառույցների հետ իրականացվող ծրագրերը,
- նպաստել վերոնշյալ ծրագրերում մագիստրոսների, ասպիրանտների և հայցորդների գործուն մասնակցությանը:

Ընթացիկ հարցեր.

Լսեցին - Համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա մագիստրոսի կրթական ծրագրերի ըստ մասնագիտությունների հեռակա համակարգի ուսման վարձերի և մեկ կրեդիտի արժեքի հարցը: (Ձեկուցող՝ պրոռեկտոր Մ. Մելիք-Բախշյան):

3. Որոշեցին – Հաստատել Համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա մագիստրոսի կրթական ծրագրերի ըստ մասնագիտությունների հեռակա համակարգերի ուսման վարձերը և մեկ կրեդիտի արժեքը՝ համաձայն հավելվածի:(Կից՝ տես հավելվածը):

Լսեցին - Համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա մագիստրոսի կրթական ծրագրերի /առկա համակարգ/ ըստ մասնագիտությունների օտարերկրյա ուսանողների ուսման վարձերի և մեկ կրեդիտի արժեքի հարցը: (Ձեկուցող՝ պրոռեկտոր Մ. Մելիք-Բախշյան):

4.Որոշեցին - Հաստատել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա մագիստրոսի կրթական ծրագրերի /առկա համակարգ/ ըստ մասնագիտությունների օտարերկրյա ուսանողների ուսման վարձերը և մեկ կրեդիտի արժեքը՝ համաձայն հավելվածի: (Կից՝ տես հավելվածը):

Հսեցին - Համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի կազմում գործող Մուլտիմեդիա գիտահետազոտական լաբորատորիայի կանոնադրության մասին: (Զեկուցող՝ պրոֆեսոր Մ. Մելիք-Բախշյան):

5.Որոշեցին – Հաստատել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի կազմում գործող Մուլտիմեդիա գիտահետազոտական լաբորատորիայի կանոնադրությունը: (Կից՝ տես կանոնադրությունը):

Հսեցին - Համալսարանում բնագիտական կրթության գիտամեթոդական կենտրոն ստեղծելու մասին:

6. Որոշեցին - Համալսարանում ստեղծել բնագիտական կրթության գիտամեթոդական կենտրոն:

Հսեցին - Համալսարանի նախապատրաստական բաժնի լուծարման մասին:

7. Որոշեցին - Լուծարել Համալսարանի նախապատրաստական բաժինը:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ